

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«Մարտունի համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի և «Շեն» ԲՀԿ աշխատակազմի ժողովի

Կազմված է «05» հունիսի 2015թ. , բաղկացած է 1 թերթից:

ք.Երևան

«05» հունիսի 2015թ.

2015թ. հունիսի 6-ին «Շեն» ԲՀԿ Երևանյան գրասենյակում տեղի ունեցավ «Մարտունի համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի ժողով, մասնակցությամբ՝ կոոպերատիվի վարչության անդամների, «Շեն» ԲՀԿ նախագահ Հայկ Մինասյանի, «Շեն» ԲՀԿ ճամբարակի գրասենյակի պատասխանատու Ս.Գալֆայանի, «Շեն» ԲՀԿ գյուղատնտես Եվարդ Շահնուրադյանը , «Շեն» Ֆրանս-ի ներկայացուցիչ Հ.Հրաչյանը, Հայ ավետարանչական ընկերության ղեկավար Հ.Ներսիսյանը: Ժողովը նախագահում է Հայկ Մինասյանը, քարտուղարում է Աշոտ Զադոյանը:

Օրակարգ՝

1. Կոոպերատիվի համար գնվող գյուղտեխնիկայի ընտրություն:

Արտահայտվեցին՝

Ն.Շահնուրադյանը ներկայացրեց գյուղտեխնիկայի ցանկը և նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Վարչության անդամները քննարկեցին համայնքի համար առավել արդյունավետ տարբերակները:

Ա.Զադոյանը նշեց, որ համայնքի հողերի մեծ մասը թեք են, և անհրաժեշտ է ձեռք բերել այնպիսի տեխնիկա, որը կկարողանա աշխատել այդ թեքությունների վրա:

Ն.Շահնուրադյանը առաջարկեց չեխական խոտհնձիչների փոխարեն գնել իտալական կամ ամերիկյան, սակայն վարչության անդամները նշեցին, որ չեխական խոտհնձիչների մասերը Հայաստանում ձեռք բերելը հեշտ է:

Ժողովը որոշեց՝

ԾիԳ ներկայացնել հետևյալ տեխնիկայի պահանջարկը՝

1. Բելառուս – 2 հատ
2. Գութան /3 խոփանի/ - 2 հատ
3. Խոտհնձիչ -2 հատ
4. Տուկապրես- - 2 հատ
5. Փոցխ- 2 հատ
6. Չեխական խոտհնձիչ – 4 հատ
7. Թրթուրավոր տրակտոր DT-75 - 1 հատ
8. ՈՒԱԶ բեռնատար- 1 հատ

Ժողովի նախագահ՝

Հ.Մինասյան

Քարտուղար՝

Ա.Զադոյան



Handwritten signature in blue ink.